ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

1/73-1/8475-16 04.03.2016թ.

ՀՀ պետական կառավարման մարմինների
աշխատակազմերին
(ըստ ցուցակի)

Երևանի քաղաքապետարանին

Հարգելի գործընկերներ,

Ինչպես հայտնի է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը պարունակում է՝

1. Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա ժամի մասին
2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները
3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին
4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին
5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին
6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը
7. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ
8. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում դրա հիմնավորումը
9. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին
10. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը
11. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ Կառավարության 10.02.2016թ.-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 10.02.2016թ.-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47.1 կետի համաձայն www.gnumner.am կայքում հրապարակման ենթակա գնման ընթացակարգի բացման նիստի արձանագրությունները պետք է կազմված լինեն Օրենքի հիշյալ դրույթին համապատասխան՝ ներառելով նաև Կարգի նշված ենթակետով սահմանված նախահաշվային գինը՝ բացառությամբ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա իրականացվող գնումների:

Միաժամանակ խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել Ձեր համակարգում գործող ՊՈԱԿ-ներին և ՓԲԸ-ներին:

ՀՀ մարզպետարաններին խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել նաև մարզի վարչական սահմաններում գտնվող տեղական ինքնակառավարման մարմիններին:

Հրոտ Արզումանյան

Կատ. ՊՆՖՀ և ՊԳ
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 800 258